

ԿՈՂՄԵՐԻ ՎԱՐՉԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՏԻԳՐԱՆ ԽԱԶԻԿՅԱՆ

Հողվածում քննարկվել են կողմերի վարչադատավարական կարգավիճակը, նրանց իրավունքների և պարտականությունների բնույթը: Փորձ է արվել նախադեպային իրավունքի լույսի ներքո քննարկման առարկա դարձնելու համապատասխան ճյուղային նորմատիվ իրավական ակտերը: Քննարկվել են նաև կողմերի իրավունքների և պարտականությունների կենսագործման իրավական վավերապայմանները: Անդրադարձ է կատարվել գործող իրավագործություններից յուրաքանչյուրին, ներկայացվել են դրանց պրակտիկ կիրառման ընթացքում ծագող հիմնախնդիրները ի պաշտոնե պարզման սկզբունքի իրացման համատեքստում: Առանձին վերլուծության առարկա են դարձել նաև ներկայացուցչության ինստիտուտի առանձնահատկությունները վարչական դատավարությունում: Բանն այն է, որ գործող օրենսդրությունը հնարավորություն է տալիս դատարանին ցանկացած դեպքում հեռացնելու ներկայացուցչին վարույթից, եթե նա ունակ չէ իրականացնելու իր գործառույթները: Արձանագրվել է, որ թեպետ նշված դատական հայեցողությունը չի կարող տարածվել փաստաբանի կամ օրինական կամ ի պաշտոնե ներկայացուցչի վրա, այսուհանդերձ նորմը ձևակերպված է բավականին անորոշ և հնարավորություն չի տալիս տեղայնացնելու այն չափանիշները, որոնց հիման վրա դատարանը կարող է իրացնել իր այս դիսկրեցիոն լիազորությունը:

Բանալի բառեր – *հայցվոր, պատասխանող, հայցադիմում, իրավական դիրքորոշում, վարչական մարմին, գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունք, «ex officio», վարչական դատավարություն, «ակտիվ» դատարան, հանրային իրավահարաբերություններ*

Ինչպես ցանկացած իրավահարաբերություն, այնպես էլ վարչադատավարական իրավահարաբերությունները ծագում են որոշակի անձանց միջև օրենքով սահմանված վարչաիրավական բնույթի վեճի լուծման կապակցությամբ: Վեճի մասնակիցները վարչական դատավարությունում հանդես են գալիս իրավունքների և պարտականությունների հստակ շրջանակ ենթադրող կոնկրետ ռեժիմով, որը դատավարական իրավունքում բնութագրվում է որպես դատավարական կարգավիճակ: Այն վարչական դատավարությունում կարող է ծագել բացառապես դատավարական օրենսդրությամբ սահմանված վավերապայմանների՝ իրավունակության և գործունակության առկայությամբ, որոնց վերաբերող ընդհանուր իրավակարգավորումներ օրենսդ-

րությանը առկա են: Դեռևս նյութական իրավունքից ձևավորված հիմնարար մոտեցումը, ինչպես գիտենք, նշված հասկացությունները միայնակից տարբերում էր հետևյալ ելակետային չափանիշով. եթե իրավունակությունն առհասարակ իրավունքներ ունենալու և պարտականություններ կրելու անձի ունակությունն է, ապա գործունակությունը սեփական գործողություններով իրավունակության կենսագործումն է իրավունքներ և պարտականություններ ձեռք բերելու (ստանձնելու) ճանապարհով: Բնականաբար, ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը չէր կարող շեղվել նյութական իրավունքում սահմանված այս կանխադրույթից:

Այսպես, Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *դատավարական իրավունքներ ունենալու և դատավարական պարտականություններ կրելու ունակությունը (դատավարական իրավունակություն) ճանաչվում է բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձանց համար՝ հավասար չափով:(...)*

Իր հերթին, նույն հոդվածի 2-րդ մասն արձանագրում է, որ *ֆիզիկական և իրավաբանական անձինք օժտված են դատարանում իրենց գործողություններով իրավունքներ իրականացնելու և պարտականություններ ստանձնելու ունակությամբ (դատավարական գործունակություն): Դատավարական գործունակությունը ֆիզիկական անձանց համար լրիվ ծավալով ծագում է՝*

- 1) *տասնութ տարեկան դառնալու պահից.*
- 2) *անչափահասին լրիվ գործունակ ճանաչելու պահից (էմանսիպացիա).*
- 3) *մինչև տասնութ տարին լրանալը՝ օրենքով սահմանված կարգով ամուսնանալու պահից:*

Ինչ վերաբերում է իրավաբանական անձանց, ապա դրանց իրավունակությունն ու գործունակությունը ծագում են միաժամանակ՝ պետական գրանցման պահից, իսկ հիմնարկների պարագայում՝ դրանց ստեղծման փաստի ուժով (Օրենսգրքի 4-րդ հոդվածի 3-րդ մաս):

Ըստ այդմ՝ վարչական դատավարությունում մասնակիցները բաժանվում են երկու հիմնական խմբի՝ *կողմերը, երրորդ անձինք:*

Վերը հիշատակված անձանց շրջանակում կենտրոնական տեղ են զբաղեցնում կողմերը՝ նյութաիրավական համապատասխան վեճի պարտադիր մասնակիցները, որոնք վարչական դատավարությունում հանդես են գալիս հայցվորի կամ պատասխանողի կարգավիճակով: Ընդ որում, այդ սուբյեկտների իրավական բնորոշման հարցում օրենսդրական մոտեցումն առավել քան հստակ է:

Այսպես, Օրենսգրքի 15-րդ հոդվածի համաձայն՝ *«Հայցվորն այն ֆիզիկական կամ իրավաբանական անձն է, վարչական մարմինը կամ պաշտոնատար անձը, որը դիմել է վարչական դատարան»:*

Միաժամանակ, Օրենսգրքի 16-րդ հոդվածն ամրագրում է. *«Պա-*

տասխանողն այն վարչական մարմինն է, պաշտոնատար անձը, ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որի դեմ հայց է ներկայացվել վարչական դատարան»:

Թեպետ իրավական նորմի մեկնաբանման իմաստով որևէ գործնական նշանակություն չունի իրավակարգավորման օբյեկտների թվարկի մեջ կոնկրետ տարրի զբաղեցրած տեղը, այսուհանդերձ հարկ է նկատել, որ բոլորովին պատահական չէ նշյալ ձևակերպումներում նման տարբերակված մոտեցումը: Ինչպես տեսնում ենք, եթե հայցվորի իրավական բնորոշման հարցում օրենսդիրն առաջինը սահմանում է ֆիզիկական կամ իրավաբանական անձին, ապա պատասխանողի բնորոշման դեպքում առաջնահերթ մատնանշվում է վարչական մարմինը կամ պաշտոնատար անձը, որը, կարծում ենք, ինքնանպատակ չէ: Օրենսդիրն այդպերպ կամահայտնություն է դրսևորում՝ ընդգծելու այն իրողությունը, որ վարչական դատավարությունում դեպքերի մեծ մասում պատասխանողի կարգավիճակում հանդես է գալիս հանրային՝ պետաիշխանական լիազորությամբ օժտված կողմը:

Հատկանշական է, որ վարչական դատավարության մասնակիցների թվարկին վերաբերող հատվածում օրենսդիրը չի ներառել դիմողին, որն անշուշտ պետք է համարել օրենսգրքի թերություն: Ասվածն առավել ևս ընդգծվում է այն իրողության հաշվառմամբ, որ բազմաթիվ հատուկ վարույթներին առնչվող իրավակարգավորումներում օրենսդիրը կիրառել է այդ եզրույթը, բայցնայնպես դրան վերաբերող մեկ միասնական բնորոշում օրենսգրքում առկա չէ:

Բնականաբար, հնարավոր չէ սպառիչ լրիվությամբ թվարկել բոլոր այն լիազորությունները, որոնցով կողմերն օժտված են դատավարության ամբողջ ընթացքում: Դատավարությունը բազմադրվագ, բազմանիստ և ընթացակարգային տարբեր առանձնահատկություններ ենթադրող տիրույթ է, որի պարագայում անհրաժեշտ է սուսկ ընդհանուր կողմնորոշիչներով սահմանել իրավունքների և պարտականությունների շրջանակ, որոնք ուղղորդող կլինեն դատավարության կազմակերպման բնականոն շարժն ապահովելու տեսակետից: Օրենսգրքի 18-րդ հոդվածն ամրագրում է Կողմերին վերապահված հետևյալ իրավազորությունները՝

ա) ծանոթանալ գործի նյութերին, ստանալ դրանց պատճենները, գործի նյութերից անել քաղվածքներ, լուսանկարներ, լուսապատճեններ և պատճեններ:

Այս իրավունքի իրացումը կարելի է որոշակի իմաստով դիտարկել որպես այլ իրավունքների իրացման նախապայման՝ այն հաշվով, որ առանց գործի նյութերին ծանոթանալու վերջինս չի կարող որևէ դիրքորոշում հայտնել գործի փաստական հանգամանքների առնչությամբ: Արդի հայերենի բացատրական բառարաններում ծանոթանալը բնորոշվում է որպես տեղեկություն ձեռք բերել, իրազեկ դառնալ, իմանալ:

Նկատի ունենալով տեղեկություն ձեռք բերելու միջոցների բազմազանությունը՝ օրենսդիրը, ինչպես տեսնում ենք, ամրագրում է ծանոթանալու հնարավոր իրավական ձևերը՝ ստանալու գործի նյութեր, դրանցից անելու քաղվածքներ (փաստաթղթի, տեղեկատվության բովանդակությունից որոշակի չափանիշով առանձնացված մաս), լուսանկարներ, լուսապատճեններ և պատճեններ¹:

Նշված իրավունքի իրացման դատավարական որոշակի ժամկետ օրենսդիրն իրավացիորեն չի նախատեսում այնքանով, որովհետև դա կարող է ծագել գործի քննության ողջ ընթացքում՝ ցանկացած նոր փաստաթղթի բովանդակության մասին իրազեկվելու անհրաժեշտությամբ պայմանավորված: Բայցևայնպես, Կողմերը պետք է բարեխղճորեն օգտվեն սեփական դատավարական իրավունքներից, և որևէ պարագայում գործի նյութերին ծանոթանալը չպետք է լինի ինքնանպատակ՝ սոսկ գործի քննությունը արհեստականորեն հետաձգելուն ուղղված քայլ: Կողմի այս վարքագծի խթանմանն է միտված Օրենսգրքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը, որի համաձայն՝ «*Կողմերը պետք է բարեխղճորեն օգտվեն իրենց դատավարական իրավունքներից և բարեխղճորեն կատարեն իրենց դատավարական պարտականությունները*»: Բնականաբար, կոնկրետ իրավիճակում գնահատելով հանգամանքները՝ Դատարանն ինքը կարող է որոշել՝ Կողմը բարեխիղճ է օգտվում սեփական իրավունքներից, թե՛ այսուհանդերձ չարաշահում է դրանք:

բ) Անելու ինքնաբացարկ հայտնելու միջնորդություններ:

Ինքնաբացարկ հայտնելու միջնորդությունները ևս անձանց վերապահված կարևոր գործիք են՝ կանխելու օրենքով սահմանված պահանջները չբավարարող դատավորի կողմից իրենց առնչվող վեճով (գործով) արդարադատության իրականացումը: Հատկանշական է, որ ինքնաբացարկ հայտնելու գործընթացը կարգավորվում է առաջին հերթին «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով (71-րդ հոդված), ինչպես նաև քաղաքացիական դատավարության օրենսգրքով (Օրենսգրքի 13-րդ հոդված): Պետք է արձանագրել, որ օրենսդիրն այս պարագայում որոշակի եզրաբանական վրիպում է թույլ տվել գործածելով «ինքնաբացարկ հայտնելու միջնորդություն» ձևակերպումը: Կողմը կարող է ներկայացնել ոչ թե ինքնաբացարկի, այլ բացարկի մասին միջնորդություն, իսկ դատավորը կարող է հայտնել ինքնաբացարկ:

Ինչևէ, գործող օրենսդրության համաձայն՝ ինքնաբացարկ կարելի է հայտնել մինչև նախնական դատական նիստի ավարտը, իսկ վերաքննիչ և Վճռաբեկ դատարաններում՝ մինչև բողոքի քննությունն սկսվելը: Եթե գործը քննվում է առանց նախնական դատական նիստ հրավիրելու, դատավորն ինքնաբացարկ կարող է հայտնել, կամ նրան բացարկ կարող է հայտնվել մինչև գործի քննության ավարտը: Բացարկը հայտնվում է գրավոր, որին կարող են կցվել դատավորի ինքնաբա-

¹ Տե՛ս Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976:

ցարկի հիմքերը հաստատող ապացույցները: Նույն հիմքով հայտնված բացարկը ենթակա չէ քննության, եթե չի ներկայացվել բացարկի հիմքը հիմնավորող նոր ապացույց: Ինքնաբացարկի կամ բացարկի հարցը լուծում է դատավորը: Եթե գործը քննվում է դատավորների կոլեգիալ կազմով, և բացարկ է հայտնվել դատավորներից մեկին կամ մեկից ավելի դատավորների կամ դատական ամբողջ կազմին, ապա յուրաքանչյուր դատավոր լուծում է իրեն հայտնված բացարկի հարցը: Ինքնաբացարկ կամ բացարկ հայտնելու դեպքում գործի քննությունն ընդհատվում է մինչև այդ հարցի լուծումը: Նիստը կարող է հետաձգվել ոչ ավելի, քան երեք օրով: Դատավորն ինքնաբացարկի կամ բացարկի հարցը քննելով՝ կայացնում է որոշում, որում շարադրվում են ինքնաբացարկի կամ բացարկի հիմքերը: Ինքնաբացարկ հայտնելու կամ բացարկը բավարարվելու դեպքում բացարկված դատավորը փոխարինվում է, և գործի քննությունն սկսվում է սկզբից: Բացարկման ինստիտուտի հետ կապված այլ մանրամասներ կարգավորվում են «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածով:

զ) Ներկայացնելու ապացույցներ և մասնակցելու դրանց հետազոտմանը:

Ժամանակակից վարչական արդարադատության իրականացումը ենթադրում է օբյեկտիվ ճշմարտության վերհանում այնքանով, որքանով դրա տիրույթում առկա փաստերը ձևակերպված են օրենքով սահմանված ապացույցներով: Դրանով է պայմանավորված ապացույցը ներկայացնելու և դրա հետազոտմանը մասնակցելու գործընթացի ողջ հրատապությունը դատավարության մասնակցի համար: Առանց սեփական դիրքորոշումը հիմնավորող ապացույցներ ներկայացնելու սկզբունքորեն իմաստազրկվում են դատավարությանը անձի մասնակցության գործնական ամբողջ կշիռն ու արժեքը: Վարչական դատավարության օրենսգիրքը որևէ անբարենպաստ հետևանք և լրացուցիչ պահանջ չի առաջադրում անձին ապացույցները դատաքննության փուլում ներկայացնելու համար: Վերջինս լիովին ազատ է այս հարցում, ինչը որոշ իմաստով պայմանավորված է ի պաշտոնե պարզման սկզբունքի կիրառմամբ: Ինչ վերաբերում է ապացույցի հետազոտմանը մասնակցելու իրավունքին, ապա դա ենթադրում է Կողմի դիրքորոշման ներկայացում այն հարցի կապակցությամբ, թե որքանով է խնդրո առարկա ապացույցը թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ որոշակի փաստի հաստատման կամ հերքման տեսակետից:

դ) Հարցեր տալու միմյանց, դատավարության մյուս մասնակիցներին, վկաներին, փորձագետներին և թարգմանիչներին, միջնորդություններ անելու, բացատրություններ տալու դատարանին, առարկելու դատավարության մյուս մասնակիցների միջնորդությունների, դիրքորոշման կամ փաստարկների դեմ:

Վարչական դատավարության մասնակիցների գործողություններ

րը չեն սահմանափակվում միայն ապացույցներ ներկայացնելու և դրանց հետազոտմանը մասնակցելու առաքելությամբ: Դատավարական գործընթացը ենթադրում է կողմերի և դատավարության այլ մասնակիցների ակտիվ՝ ապացուցման առարկան կազմող փաստերի հաստատման կամ հերքման մասով նպատակամետ գործողությունների կենսագործում, ինչն ուղղակիորեն ենթադրում է գործի քննության ընթացքում տարատեսակ միջնորդություններ հարուցելուն, միմյանց հարցեր տալուն, դատավարության մյուս մասնակցի դիրքորոշման դեմ առարկելուն ուղղված գործնական քայլերի իրականացում: Հատկանշական է, որ օրենսդիրն օգտագործում է «բացատրություն տալ դատարանին» և «հարցեր տալ միմյանց» բառակապակցությունները, որից ուղղակիորեն կարելի է եզրակացնել, որ դատարանին հարցեր տալու իրավասությամբ դատավարության կողմն օժտված չէ: Օրենսդիրն իրավացիորեն չի սահմանում դատավարության մյուս մասնակցի դիրքորոշման դեմ առարկելու դատավարական ձևը. այն կարող է լինել ինչպես գրավոր փաստաթուղթ ներկայացնելու ձևով, այնպես էլ բանավոր հիմունքներով: Պարզապես, ելնելով վարույթի ընթացքում ընթացակարգային որոշակիության առավել բարձր չափով երաշխավորման անհրաժեշտությունից՝ նպատակահարմար է հիմնարար բնույթի դիրքորոշումները դատարանին ներկայացնել գրավոր:

Բնականաբար, իրավունքների և պարտականությունների միջև օբյեկտիվորեն առկա է անխզելի սինկրետիկ կապ, և այս իմաստով դատավարական իրավունքը չէր կարող լինել բացառություն: Դրանով է պայմանավորված Օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումը. *«Կողմերը կրում են սույն օրենսգրքով սահմանված դատավարական պարտականություններ»*: Կողմերի պարտականությունները դրսևորվում են Օրենսգրքի բոլոր այն դրույթներում, որոնցում նախատեսվում է վարքագծի հայեցողություն և գործողության չկատարման դեպքում անբարենպաստ հետևանքներ առաջադրող կարգավորում *(հայցադիմումի պատասխանի ներկայացում, բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու մասին միջնորդություն և այլն)*:

Դատավարական գործողություններին անձի ներգրավումը չի ենթադրում անպայման անձնական մասնակցություն: Վարչական դատավարությունը խիստ մասնագիտացված, ոլորտային գիտելիքների կիրառում ենթադրող ընթացակարգ է, որպիսի փաստը դեպքերի մեծ մասում հանգեցնում է փաստաբանի մասնակցության անհրաժեշտության: Ընդ որում, ուշագրավ է, որ ներկայացուցչի միջոցով անձի մասնակցությունը դատավարությանը չի ենթադրում վարչական դատավարությանը անձի անձնական մասնակցության որևէ բացառում կամ սահմանափակում: Պարզապես, ներկայացուցչի կատարած դատավարական գործողությունները դատավարության մասնակցի համար նույնքան պարտադիր են, որքան այն դեպքում, եթե դատավա-

րության մասնակիցն ինքը դրանք կատարեր:

Բացի այդ, հնարավոր են դեպքեր, երբ որոշակի օբյեկտիվ պատճառներով (օր.՝ դատավարական գործունակությամբ օժտված չլինելու) անձը զրկված լինի դատական նիստին իր անմիջական մասնակցությունն ապահովելու հնարավորությունից:

Վերը հիշատակված չափանիշներից ելնելով՝ գործող օրենսդրությունն ուղղակիորեն հնարավորություն է տալիս անձին գործի վարումն իրականացնելու ինչպես անձամբ, այնպես էլ իր կողմից ընտրված մեկ կամ մի քանի ներկայացուցչի միջոցով և, ըստ այդմ, սահմանում է ներկայացուցչության իրականացման երեք հնարավոր տեսակներ.

Օրինական,

Ի պաշտոնե,

Լիազորագրի հիման վրա:

Օրինական ներկայացուցչության գծով իրավահարաբերություններ կարող են ծագել օրենսդրությամբ նախատեսված սահմանափակ թվով դեպքերում: Դրանք վերաբերում են այն անձանց, որոնք չունեն դատավարական լիարժեք իրավասուրբեկտություն՝ կամ դեռ չի հասել օրենսդրությամբ սահմանված գործունակության ձեռքբերման տարիքը, կամ էլ արդեն ձեռք բերված գործունակությունն է կորսվել կամ սահմանափակվել:

Այսպես, օրինական ներկայացուցչության օրենսդրությամբ սահմանված դեպքերը հանգում են հետևյալին.

«Անգործունակ և սահմանափակ գործունակ անձի իրավունքները և ազատությունները դատարանում պաշտպանում է նրա օրինական ներկայացուցիչը» (այս և հետագա ընդգծումները մերն են) (Օրենսգրքի 22-րդ հոդվածի 3-րդ մաս):

«Տասնչորս տարեկան չդարձած անչափահասների, ինչպես նաև անգործունակ ճանաչված անձանց իրավունքները և ազատությունները դատավարությունում ներկայացնում են նրանց օրինական ներկայացուցիչները՝ ծնողը, խնամակալը կամ օրենքով նման իրավունք ունեցող այլ անձինք» (Օրենսգրքի 4-րդ հոդվածի 6-րդ մաս):

«Տասնչորսից տասնութ տարեկան անչափահասներին, ինչպես նաև սահմանափակ գործունակ ճանաչված անձանց դատարանում ներկայացնում են նրանց օրինական ներկայացուցիչները» (Օրենսգրքի 4-րդ հոդվածի 4-րդ մաս): Օրենքով նախատեսված դեպքերում տասնչորսից տասնութ տարեկան անչափահասները կարող են ինքնուրույն ներկայացնել իրենց շահերը: Նման դեպքերում դատարանը կարող է դատավարությանը մասնակից դարձնել նրանց օրինական ներկայացուցիչներին (Օրենսգրքի 4-րդ հոդվածի 5-րդ մաս):

Վերը բերված օրինակների բովանդակային վերլուծությունից աներկբա է, որ օրինական ներկայացուցչության ինստիտուտը համակարգային առումով փոխկապակցված է դատավարական իրավասուր-

յեկտության հետ այնքանով, որքանով ծագում է հենց այդ հատկանիշի արատի հետևանքով: «Օրինական» եզրույթն այս իրավիճակում ենթադրում է, որ ներկայացուցչի լիազորությունները կոնկրետ իրավիճակում բխում են օրենքով թելադրված անհրաժեշտությունից և կարգավիճակից:

Ինչ վերաբերում է ի պաշտոնե ներկայացուցչությանը, ապա պետք է փաստել, որ դրա իրավական հիմքերը ևս օրենսդրորեն սահմանված են սպառիչ լրիվությամբ: Մասնավորապես, Օրենսգրքի իմաստով ի պաշտոնե ներկայացուցչության դեպքերը ներառում են հետևյալ իրավիճակները.

Այն գործով, որին պետք է մասնակցեր սահմանված կարգով անհայտ բացակայող ճանաչված անձը, որպես նրա ներկայացուցիչ հանդես է գալիս նրա գույքի հավատարմագրային կառավարիչը (Օրենսգրքի 22-րդ հոդվածի 4-րդ մաս):

Այն գործով, որին պետք է մասնակցեր մահացած կամ սահմանված կարգով մահացած ճանաչված անձի ժառանգը, եթե ժառանգությունը ոչ ոք դեռևս չի ընդունել, որպես ժառանգի ներկայացուցիչ հանդես է գալիս ժառանգական գույքի պահպանման և կառավարման համար նշանակված անձը (Օրենսգրքի 22-րդ հոդվածի 5-րդ մաս):

Դատարանում իրավաբանական անձանց գործերը վարում են օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ իրավաբանական անձը ներկայացնելու լիազորությամբ օժտված անձինք (Օրենսգրքի 22-րդ հոդվածի 6-րդ մաս):

Մնանկ ճանաչված կամ լուծարվող իրավաբանական անձանց գործերը վարում են սնանկության ժամանակավոր կառավարիչը, սնանկության կառավարիչը կամ լուծարային հանձնաժողովի լիազորած անդամը (Օրենսգրքի 22-րդ հոդվածի 7-րդ մաս):

Որպես պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչ դատարանում ի պաշտոնե հանդես է գալիս այդ մարմնի ղեկավարը կամ նրա տեղակալը (Օրենսգրքի 22-րդ հոդվածի 8-րդ մաս):

Վերը նշված դեպքերում ներկայացուցչության իրականացումը պայմանավորված է այն իրողությամբ, որ անձի կարգավիճակից, օրենքով կամ այլ իրավական ակտով սահմանված կոնկրետ դրույթից է բխում սուբյեկտի՝ ի պաշտոնե ներկայացուցիչ լինելու փաստը: Ի տարբերություն օրինական ներկայացուցչության, որը ենթադրում է անձի գործունակության հետ կապված ուղիղ պայմանավորվածություն՝ ի պաշտոնե ներկայացուցչության դեպքում առաջնային շեշտադրումն ամենևին գործունակության ինստիտուտը չէ, այլ այն, որ որոշակի օբյեկտիվ հանգամանքների պատճառով սեփական շահերը դատարանում ներկայացնելու անհնարինության կամ իրավաբանական անձանց, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների

պարագայում օրենքը պետք է որևէ կերպ ապահովի դատավարությանը կոնկրետ անձի մասնակցության հնարավորությունը: Ուշագրավ է, որ ինչպես օրինական, այնպես էլ ի պաշտոնե ներկայացուցիչները սեփական կարգավիճակն ընդգծելու նպատակով որևէ լրացուցիչ լիազորության վերապահման անհրաժեշտություն չունեն: Ավելին, նրանք կարող են դատարանում գործերի վարումը լիազորել իրենց կողմից ընտրված ներկայացուցիչներին, որպիսի իրավունք ուղղակիորեն ընձեռված է օրենսդրությամբ (Օրենսգրքի 23-րդ հոդվածի 10-րդ մաս):

Այսպես, Օրենսգրքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *իրավաբանական անձի անունից լիազորագիրը տալիս է նրա գործադիր մարմնի ղեկավարը կամ կանոնադրությամբ այդ իրավաբանական անձին առանց լիազորագրի ներկայացնելու իրավասություն ունեցող անձը՝ նրա ստորագրությամբ:*

Նույն հոդվածի 3-րդ մասն ամրագրում է, որ *պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի անունից լիազորագիրը տալիս է նրա ի պաշտոնե ներկայացուցիչը՝ վերջինիս ստորագրությամբ և այդ մարմնի կնիքի դրոշմմամբ:*

Համանման կարգավորում է նախատեսված նաև պաշտոնատար անձանց պարագայում:

Այսպիսով, ի պաշտոնե և օրինական ներկայացուցիչների լիազորությունները հաստատելու համար բավարար է սուկ իրենց կարգավիճակը հավաստող փաստաթուղթ ներկայացնելը:

Ինչ վերաբերում է լիազորագրի հիման վրա իրականացվող ներկայացուցչությանը, ապա պետք է նկատել, որ այս հարցում Օրենսգրքով սահմանված մոտեցումն ավելի «ազատական» է, քան քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված իրավակարգավորումն է: Եթե քաղաքացիական դատավարության օրենսգրքով որպես ընդհանուր կանոն սահմանված է բացառապես փաստաբանի միջոցով անձի մասնակցության հնարավորությունը, ապա վարչական դատավարության օրենսդրությամբ փաստաբանի կարգավիճակի առկայությունն ամենևին պարտադիր չէ դատական ներկայացուցչություն իրականացնելու համար:

Այսպես, Օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Ֆիզիկական անձին տրված լիազորագիրը վավերացնում է նոտարը կամ հաստատում է օրենքով նման իրավասություն ունեցող պաշտոնատար անձը: Փաստաբանին լիազորագիրը տրվում է հասարակ գրավոր ձևով և այն վավերացման կամ հաստատման ենթակա չէ»:*

Իհարկե, մեր համոզմունքն է, որ դատավարական տարբեր ճյուղերին առնչվող կարգավորումներում առկա տարբերություններն իրավաչափ կարող են լինել բացառապես այն պարագայում, երբ դրանցում առկա լինի տարբերակման օբյեկտիվ և ողջամիտ հիմք, որպիսին խնդրո առարկա իրավիճակում բացակայում է: Մինևույն բնույթի ինս-

տիտուտների իրավակարգավորումներում պետք է լինեն միանման մոտեցումներ, այլապես կխաթարվի դրանց հիմքում ընկած տրամաբանությունը: Անգամ եթե մի պահ որպես քննարկվող իրավակարգավորման ելակետ ընդունենք այն, որ վարչական դատավարությունում գործում է ի պաշտոնե պարզման սկզբունքը, և վերջինիս փոխհատուցող գործառույթը կլրացնի փաստաբան չհանդիսացող ներկայացուցչով հանդես գալու հետևանքով ծագած թերությունները (բացթողումները), ապա պետք է նկատել, որ ի պաշտոնե պարզման սկզբունքն ամենին չի ենթադրում վարույթի մեկ կողմից տրված արտոնություն՝ ի հաշիվ մյուսի, կամ անհավասար վերաբերմունք դատավարության որևէ մասնակցի հանդեպ: Դատավարության ընթացքում կարող է ծագել ամենաբազմազան, այդ թվում՝ նեղ մասնագիտական գիտելիքների կիրառման անհրաժեշտություն՝ ապացուցման բեռի, հայցատեսակի ընտրության և բազմաթիվ այլ խնդրահարույց ինստիտուտների հետ կապված, որպիսի հանգամանքն ուղղակի ենթադրում է փաստաբանի մասնակցության անհրաժեշտություն նաև վարչական դատավարությունում:

Ինչևէ, լիազորագիր կազմելու և դրա բովանդակությանն առնչվող հարցերում ևս Օրենսգիրքն առանձնահատուկ կարգավորումներ է ամրագրել: Այսպես, *«սահմանված կարգով տրված լիազորագրով ներկայացուցիչները ստանձնում են լիազորագրորդ տված անձի՝ որպես դատավարության մասնակցի բոլոր իրավունքները՝ անկախ դրանց վերաբերյալ լիազորագրում հատուկ նշում կատարված լինելու հանգամանքից, բացառությամբ այն դեպքի, երբ առկա է լիազորագրորդ տվող անձի անհամաձայնությունը սույն օրենսգրքով դատավարության մասնակիցներին վերապահված իրավունքներից որևէ մեկով կամ մի քանիսով ներկայացուցչին օժտելու վերաբերյալ: Այդ մասին հատուկ նշվում է ներկայացուցչի լիազորագրում»:*

Հիշյալ իրավակարգավորումը վարչական դատավարությունում տնօրինչականության սկզբունքի մասնակի գործողության դրսևորումներից է: Եթե քաղաքացիական դատավարությունում յուրաքանչյուր լիազորություն ստանձնելու համար անհրաժեշտ է այդ մասին լիազորագրում կատարել հատուկ նշում, ապա վարչական դատավարությունում ինքնին ընդհանուր հիմունքներով ձևակերպված լիազորագիրն առ այն, որ ներկայացվողը լիազորագրել է ներկայացուցչին լինելու իր ներկայացուցիչը վարչական դատարանում, վերջինիս իրավունք է տալիս ներկայացվողի անունից կատարելու նրան՝ որպես դատավարության մասնակցի վերապահված բոլոր լիազորությունները՝ անկախ այն հանգամանքից՝ նախատեսված է դա լիազորագրում, թե՛ ոչ:

Նկատի ունենալով, որ առանձին դեպքերում կարող է ծագել Կողմի ներկայացուցչի լիազորությունների առավել օպերատիվ ձևակերպման և, դրանով պայմանավորված, նաև դատավարության մասնակցի՝

տվյալ դատական նիստին պատշաճ մասնակցությունն ապահովելու անհրաժեշտությունը՝ գործող օրենսդրությունը նախատեսել է բանավոր հիմունքներով լիազորությունների ձևակերպման ինստիտուտն այն դեպքերի համար, երբ ինչպես ներկայացուցիչը, այնպես էլ ներկայացվողը ներկա են դատական նիստին:

Այսպես, Օրենսգրքի 24-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *«Դատական նիստին ներկայացուցչի հետ մասնակցող կողմն իրավունք ունի իր ներկայացուցչի լիազորությունները հաստատելու դատարանի առջև՝ բանավոր սահմանելով վերջինիս լիազորությունների ծավալը»:*

Նման իրավակարգավորումն անշուշտ պետք է համարել դրական՝ պայմանավորված այն իրողությամբ, որ եթե ներկայացուցիչն ու ներկայացվողը դատական նիստին ներկա են, նրանց ինքնությունն ու գործունակությունը ստուգվել են, ապա բոլորովին անիմաստ կլիներ լիազորագրի ձևակերպման հավելյալ պահանջի առաջադրումը հատկապես այն հանգամանքի հաշվառմամբ, որ բանավոր լիազորությունների սահմանման հատվածը ևս արձանագրվում է դատական նիստի ընթացքում:

Օրենսդիրը ներկայացուցչության վարույթի իրավակարգավորման միայն վերը բերված կարգավորումներով չի սահմանափակվել: Օրենսգրքով նախատեսվել է նաև էականորեն խնդրահարույց և իրավակիրառ պրակտիկայում հազվադեպ կիրառվող մի կարգավորում, որը դատարանին հնարավորություն է տալիս հեռացնելու ներկայացուցչին վարույթից: Այսպես, Օրենսգրքի 23-րդ հոդվածն արձանագրում է. *«Դատարանը կարող է հեռացնել վարույթից կողմի այն ներկայացուցչին, որը փաստաբան կամ օրինական կամ ի պաշտոնե ներկայացուցիչ չէ, եթե գործը քննության նախապատրաստելու փուլում կամ դատաքննության ընթացքում պարզ է դառնում, որ տվյալ անձն ունակ չէ դատարանում ներկայացնելու կողմին»:*

Թեպետ նշված դատական հայեցողությունը չի կարող տարածվել փաստաբան կամ օրինական կամ ի պաշտոնե ներկայացուցիչ հանդիսացող անձի վրա, այսուհանդերձ նորմը ձևակերպված է բավականին անորոշ և հնարավորություն չի տալիս տեղայնացնելու այն չափանիշները, որոնց հիման վրա դատարանը կարող է իրացնել իր այս դիսկրեցիոն լիազորությունը:

ТИГРАН ХАЧИКЯН – Особенности административно-процессуального статуса сторон. – В статье обсуждается характер прав и обязанностей сторон, правовые условия жизнедеятельности каждого из них. В данном контексте рассмотрено каждое действующее полномочие, представлены проблемы, возникающие при их практическом применении, обсуждая их в контексте реализации принципа официального выяснения. Институт представительства также стал предметом отдельного анализа, в котором были обсуждены его особенности в административном судопроизводстве. Дело в том, что действующее законодательство предоставляет суду возможность в любом случае отстранить представи-

теля от судебного разбирательства, если он не в состоянии представлять сторону процесса. В рамках вышеуказанного было установлено, что хотя указанное судебное усмотрение не может быть распространено на адвоката или лицо, являющееся законным или по должности представителем, тем не менее норма сформулирована достаточно неопределенно и не дает возможности локализовать те критерии, на основании которых суд может реализовать данное дискреционное полномочие.

Ключевые слова: истец, ответчик, ходатайство, позиция, правовой статус, административный орган, принцип выяснения фактических обстоятельств дела в силу занимаемой должности, «*ex officio*», административное судопроизводство, «активная» роль суда, публичные правоотношения

TIGRAN KHACHIKYAN – *Features of Administrative-Procedural Status of the Parties.* – The article discusses the nature of the rights and obligations of the parties and the legal validity of their implication. With this regard, the article refers to the existing authorizations and the issues arising during their application in practice, which is presented in the context of the implementation of the principle of *ex officio*. As the subject of separate analysis, the institute of representation is studied, discussing its features in administrative proceedings. The main issue is that the current legislation allows the court to remove the representative from the proceedings in any case if he is not capable to represent the party. Within this framework, it was stated that although the aforementioned judicial discretion cannot be extended to an attorney or a legal or official representative, the norm is formulated in a manner that does not provide an opportunity to identify the criteria on the basis of which the court can exercise its discretionary power.

Key words: *plaintiff, defendant, petition, position, legal status, administrative body, principle of examining the facts of the case ex officio, administrative court procedure, “active” role of court, public relations*